

## Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ԿՈՆՖԼԻԿՏԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՌՈՐԴԱԿՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Կոնֆլիկտի սկզբնական պատճառը սովորաբար բացատրվում է հավասարության պահանջմունքի խախտումով: Պատահական չէ, որ ընդունված օրինաչափությունների և կարգը խախտողների գործունեությունը հանգեցնում է հավասարության և արդարության պահանջմունքի քրոնիկական ֆրուստրացիաների:

Սահմանային իրավիճակներում մեկ անձի վարքը երբեմն հակասում է այլ անձանց իրավաբանական ու բարոյական ոլորտություններին, որով էլ պայմանավորվում է նրանց վարքազծի հարկադրական փոփոխությունը: Վարքազծի փոփոխության արտահայտման միջոցներից է ազգեսիկ գործողություն՝ ֆիզիկական ճնշման սպառնալիքով կամ կարգավիճակի խախտումով: Այսպիսի դեպքերն առավելապես առնչվում են հոգեբանական կոնֆլիկտներին:

Ըստ լեզվական ընկալման՝ կոնֆլիկտը հակադիր շահերի, ձգտումների, հայցըների, ոժերի բախում է՝ ընդհարում, բախում, որն ընկած է գեղարվեստական երկի գործող անձանց պայքարի հիմքում:<sup>1</sup>

Փիլիսոփայական հայեցակետի համաձայն՝ դրամատիկական կոնֆլիկտը կենսական հակասությունների արտահայտման յորօրինակ գեղագիտական ձև է: Նրա բովանդակությունը գեղեցկի և այլանդակի միջև մղվող պայքարն է: Կոնֆլիկտը ծագում և լուծվում է որոշակի սոցիալական ուժերի և հասարակական զարգացման միտումների բախման վրա:<sup>2</sup>

Կոնֆլիկտը լատիներեն *conflictus*՝ ընդհարում, բախում բառից է առաջացել. հայտնի են այս երևույթի բնորոշման ու սահմանման տարրեր հայեցակետեր:

Հոգեբանության մեջ առանձնացվում է կոնֆլիկտների հետևյալ տեսակները.

1. Ներանձնային. բնորոշագրվում է նույն անձի մեջ երկու հավասար ուժերի կամ զաղափարների բախմամբ՝ հակադրվելով ուղղվածությամբ, դրդապատճառներով, հետաքրքրություններով, պահանջմունքներով և այլն:
2. Սիջանանային. առաջանում է մարդկանց միջև միմյանց փոխհարաբերվելիս, երբ նրանք հետապնդում են անհամատեղելի նպատակներ՝ ունենալով անհամատեղելի արժեքային կողմնորոշումներ ու սկզբունքներ: Նման դեպքերում սուր մրցակցությամբ ձգտում են հասմելու միևնույն հետապնդելի նպատակին, որը բնականարար վերապահված է միայն կողմերից մեկին:
3. Սիջխնճային. իրեն բախումային կողմեր հանդես են գալիս սոցիալական խմբերը, որոնք ունեն անհամատեղելի նպատակներ և իրենց գործունեությամբ խոչընդոտում են մեկը մյուսին:<sup>3</sup>

Ամեն մի կոնֆլիկտ ծագում է միայն օրյեկտի առկայության դեպքում: Անհատի և սոցիալական խմբերի բախումներն առանց հիմքի չեն լինում և տեղի են ունենում այն դեպքում, եթե մասնակիցները չեն կարողանում միմյանց միջև ինչ-ոք բան պարզաբերել: Սարդիկ պայքարի մեջ են մտնում ոչ միայն իրական նյութական բարիքների համար, այլև հետապնդելով ու պաշտպանելով խարուսիկ իդեալներ: Կոնֆլիկտի առարկան միշտ իրական է և արդիական, իսկ օրյեկտը կարող է լինել ինչպես ակնհայտ, այնպես էլ լատենտային (քարենված):

Կոնֆլիկտի դիմամիկան ըմբռնելու համար նախ անհրաժեշտ է քննության առնել նրա էներգետիկան և ապա զարգացման ընթացքը: Ցուրաքանչյուր կոնֆլիկտի տևողությունը այնքան է, որքան կողմերը եռանդ են դնում այն պահպանելու համար:

<sup>1</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III, (Կ-Մ), Եր., 1974, էջ 184:

<sup>2</sup> Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 216:

<sup>3</sup> Краткий психологический словарь, Политиздат, М., 1985, стр. 152.

Կոնֆլիկտի լիցքի հզրության չափը պայմանավորված է նրանով, թե որքան ավելի մեծ եռանդով են կողմերը լծվում կոնֆլիկտը «քրոբքելու» գործին:

Հարկ է տարբերակել այն օրյեկտիվ և սուրյեկտիվ գործոնները, որոնք ներքաշում են մարդկանց կոնֆլիկտային գործողությունների ոլոր:

Օրյեկտիվ գործոնները իրականության մեջ զոյլություն ունեցող հաճամաճըներն են, որոնք զիսավորապես կապված են կեցության պայմանների, ինչպես նաև անհատի կամ սոցիալական խմբի սոցիալ-հոգեբանական էական առանձնահատկությունների հետ: Օրյեկտիվ գործոնների առկայությունը, որը անհատի կամ սոցիալական խմբերի կենսականորեն կարևոր պահանջնունքների, շահերի, նպատակների բախում է առաջացնում, կոնֆլիկտը դարձնում է անխոսավիելի: Ի դեպ, դեպքերի ծավալ-մանը զուգահեռ կոնֆլիկտը կարող է ենթարկվել ձևափոխությունների:

Սուրյեկտիվ գործոնները խթանում են կոնֆլիկտային գործողությունները և որոշվում են երևակայական, պատրաճքային հաճամաճներով: Այս դեպքում մարդը աղավարված է պատկերացնում այն վիճակը, որում գտնվում է իրական հաճամաճըները ևս խեղաքություն են երևակայականի ճնշմամբ: «Պատրաճքները կոնֆլիկտը իրակրող և զորեղացնող պատճառներն ու ազդակներն են: Ըստ եռյան, երևակայամոլությունը շիկացնում է կրքերն այնքանով, որքանով իրական են հաճամաճները: Մարդը, հայտնվելով տարածայնությունների գոտում, կրում է կոնֆլիկտի և օրյեկտիվի՝ սուրյեկտիվ գործոնների «լարգները»:

Գոյություն ունեն բոլոր մարդկանց ներհատուկ մի քանի տիպական պատրաճքներ, որոնք վկայում են կոնֆլիկտի շիկացնան և էներգետիկայի մասին՝ «հաղթելապարտվելու» պատրաճքը, «փերճարդարացման» պատրաճքը, «վաստ մարդու» պատրաճքը, «հայելային ընկալման» պատրաճք<sup>4</sup> (բախվող երկու կողմերի մեջ երկությների ընկալման վերաբերյալ նոյն պատկերացումների ստեղծում, այնպես, ինչպես հայելուն նայելիս): Ներանձնային կոնֆլիկտներում մարդու հոգում խսորվող դրդապատճառների պայքարում, հաղթելու հավանականություն ունի առավել հզր էներգետիկ լիցք ունեցողը: Հարցը, սակայն, շատ ավելի է բարդանում միջանձնային կամ խմբային կոնֆլիկտների դեպքում:

#### Ո՞րն է կոնֆլիկտի «ուժը»:

Հնարավոր չեն թվարկել այն բոլոր գործոնները, որոնք հաղթանակ և գերազանցություն են ապահովում կոնֆլիկտներում: Սակայն կոնֆլիկտային գործողության եղանակն ընտրելու խնդրում մեծ նշանակություն ունի ոչ այնքան այդ ուժի «քացարձակ մեծությունը», որքան նրանց հարաբերությունը, ուժերի հաշվեկշիռը: Կոնֆլիկտային պայքարում ուժերի հարաբերակցությունը կարող է փոփոխվել: Հակամարտող կողմերից մեկի գործողությունների նպատակը մյուսի ուժերը բոլուցնելն է: Կոնֆլիկտի դիմամիկան շատ հարցերում որոշվում է նրանով, թե կողմերն ինչպես են հասնում ուժերի գերակայության՝ շրջելով այն իրենց կողմը:

Սահմանային իրավիճակներում վտանգի պահից մինչև վարքագծի ընտրությունը կուտակվում են ազրեակի գործողության ռեսուրսներ: Եթե բացասական էներգիան և եռանդությ համաժամանակյա դրւու չեն մղվում, կարող են առաջանալ հոգեստմատիկ հիվանդություններ և հոգենկրոպներ: Մարդկանց պահանջնունքների հակասությունների մեջ ընդգծելով կողմերից մեկի առավելությունը:

Բոլոր դեպքերում հարկավոր է նվազագույնի հասցեն ազրեակի վարքագծի դրաւորումները՝ գտնելով բացասական իմպուլսի պարագան երրուիներ: Ազրեակի վարքագծի գասման և նվազեցման շնորհիկ, օգտագործելով հակառանական միջոցներ, կառուի է կանխել հակասությունների առաջացումը և բոլուցնել լարվածությունը: Անհրաժեշտ է վերազնել ու պահպանել նախկին ներդաշնակ հարաբերությունները՝ այսպիսով լուծելով միջանձնային հակասությունները:

Գերազանցության նշանները երբեմն դրսևորվում են բարյացակամության շեշտով, կարենցությամբ, հաղորդակցման պարզությամբ, որոնք առկա են մարդու հոգե-

<sup>4</sup> Конфликтология, Учебник, Санкт-Петербург, 2000, стр. 44-45.

կանի մեջ և որոնցից դժվար է ազատվել: Գաղտնի գերազանցության նշան կարելի է համարել սեփական անձի ճշմարիս լինելու մեջ համոզվածությունը:

Կոնֆլիկտային կողմերին կարելի է առաջարկել մի քանի դարձվածներ, որոնք կանխում են ինքնահավան լինելու տպավորությունը (ինձ թվում է, ըստ իս..., եթե չեմ սխալվում..., ես այդպես եմ կարծում...)՝ միջավայրին դրական կողմնորոշելով:

Եթե խոսակցի վարքագիծը հակադրվում է ներխմբային կանոններին և բարոյական դիրքորոշումներին, հակազդեցության նպատակահարմարությունը պետք է ընտրել հաղորդակցման ունակությունների վրապումներին առնչվող կոնֆլիկտները բացասարար են ներազդում կողմերի վրա՝ հանգեցնելով ներանձնային կոնֆլիկտի:

Հաղորդակցման երկար ժամանակահատվածում կարելի է պարզել խոսակցի արժեքային կողմնորոշումները, անձնային դիրքորոշումները՝ այսպիսով, հասնելով անձերի միջև հնարավոր կոնֆլիկտների հարթեցման:

Հոգեկարգավորման սկզբունքներից մեկը, այսպիսով, կոնֆլիկտների համահարթեցման մեթոդը՝ համակարգված կրումով, վեճը կանխելու հմտության հասնելն է, ըստ էության, միշտ վարվելակեպով կանխելով կոնֆլիկտի առաջցումը:

Մշակում են կոնֆլիկտային հաղորդակցման հոգեբանական կոռեկցիայի մեթոդային եղանակներ, որոնք կիրառում են եակենուրուն, ազրեսիվ ու շրջապատռղների հանդեպ գերազանցության ձգուում ունեցող մարդկանց նկատմամբ: Բոլոր դեպքերում կոնֆլիկտածին իրավիճակ է ստեղծում հավասարության պահանջնունքի ֆրուստրացիան: Գերազանցման ցանկությունը և ակնհայտ նշանների դրսւորումը հասուն են նրանց, ովքեր խորությամբ չեն ընդունում մարդկանց հավասարության գաղափարը: Սահմանային իրավիճակներում ազրեսիվ տատանումների անվիճությունը՝ խթան-հակազդեցություն, հակազդեցություն-խթան, գործողությունների շղթայում ավելանուն է: Երբեմն լարվածության ուժեղացումն ուղեկցվում է ավելիշ գործողությունների պատրաստականությամբ: Սովորաբար վեճն ավարտվում է բարոյական և իրավական արգելափակ գոտու սահմանի մոտ՝ ի վերջո հանգեցնելով ագերափի խմանության:

Համակեցության և վարվելակերպի կանոնների խախտումը ևս առնչվում է գերազանցության գաղափարի կամ դրսւորվող նշանների արտահայտմանը՝ հաճախ մեղադրանքների և վիրավորանքների ձևով: Մեղադրանքն ընդունելու դեպքում կարող են նվազել անձի ստեղծագործական ներուժը, ինքնահարգանքը և միջավայրի հարգանքը, իսկ մեղադրանքի անընդունելիությունը փոխարկվում է ակտիվ տեսակի՝ պատասխան մեղադրանքի և պայմանագործական առաջարկությունը ակտիվ ակտիվացմանը:

Հարց է առաջանում՝ ինչպես վերաբերվել քննադատությանը, առանց որի անհնար է պատկերացնել համագործակցությունը:

Ըստ մեթոդական հղման՝ անհրաժեշտ է քննադատող անձից տարանջատել մեղադրական սլաքը՝ առավելապես շեշտադրելով կառուցողական առաջադրանքները (կոնստրուկտիվ) և կանխելով թյուր մոտեցումներն ու հայեցակեները:

Հաղորդակցման գործընթացում կոնֆլիկտածին գործոններից է, այսպես կոչված, «վերևից ներքև» ուղղորդված հումորը: «Չափության նոխազի» բարդույթը ունեցողները նույնիսկ բարյացական հումորի դեպքում տառապում են դիսկոնֆորտից կամ անբարեհարմարությունից: Առհասարակ անբարեհիտ հումորն ինքնարարձրացում է խոսակցի նվաստացման հաշվին. շփրվածությունը, պատասխան տալու փորձները կամ հոգեբանական պաշտպանության մյուս միջոցները (վիրավորանք, մեղադրանք) վերատիմ լարվածություն են առաջանում՝ հանգեցնելով կոնֆլիկտային իրավիճակի: Միայն ընկերական միջավայրում, որ առկա են ինտենսիվի, բարյական որակների հավասարություն, հոգեմտավոր նկարագրի ընդհանրություն, հումորը կորցնում է գերազանցության շեշտադրումը և արդարացվում է:

Անհրաժեշտ է ուշադրությունը բևեռել մարդկանց՝ միմյանց վրա ազդելու ոճին՝ ընդգծելով ժողովրդավարական ոճի և՝ առավելությունները, և՝ առանձնահատկությունները ավտորիխուարի համեմատությամբ: Ժողովրդավարական ոճի սկզբունքն է՝ պարտադրել և կոնֆլիկտի լուծնան ուղիներ առաջարկել նկարագրելով հնարավոր առավելություններն ու թերությունները: Այս դեպքում խրախուսվում է նաև այլ առաջարկությունների առաջադրումը. պարտադրում է ոչ թե անձը, այլ թելադրում է իրականությունների առաջադրումը. պարտադրում է ոչ թե անձը, այլ թելադրում է իրականությունը:

նը, հարաբերությունները զարգանում են փոխադարձ հավանության և համաձայնության մքննողատում, հետևաբար բարձրանում են անձի ակտիվությունը և ինքնագնահատականը:

Հաղորդակցման գործնքացում առավելապես կարևորվում է հավասարության սկզբունքի պահպանումը: Հաճախ կոնֆլիկտային իրավիճակներում հակադրեցության բացակայությունը կարող է բացատրվել այն հանգամանքով, որ անձը խոսափել է վեճից՝ ի վեսա արժանապատվության կրասի: Անձի արժանապատվությունը չվճառող ինքնաշխատությունը տրամադրում է համերաշխության: Լինում են դեպքեր, երբ միտումնավոր խախտվում են Վարվելակերպի ու բարոյականության ընդունված օրենքներին ու օրինաշահությունների, որի հետևանքով լարվածություն է ստեղծվում միջանձնային հարաբերությունների ողորսում: Հակադրությունը տեղափոխվում է օրենքը կամ կարգը խախտել ցանկացողների և այն բույլ չտվողների միջև: Նման դեպքերում անհրաժեշտ է փոխել խախտողի դիրքորոշումը, անձնային ուղղվածությունը, որը բացաված է առանց կոնֆրոնտացիայի: Նպատակահարմար չէ օգուագործել վիրավորական խոսքեր կամ բարձրացնել ձայնի հնչերանգը, երբեմն նախընտրելի է խոսքի մեջ մտցնել հեգնական ինտոնացիա՝ այսպիսով գասատացնելով և սրբագրելով խոսակցին:

Հոգեկարգավորման գործնքացը կարելի է իրականացնել փուլային ներգործությամբ՝ աստիճանաբար նվազեցնելով հոգեբանական ճնշումը: Կողմերին հաղորդելով ակտիվ և առողջ կենսական դիրքորոշում՝ չեզոքացնել վիճարանողների բացասական միտումները: Այս ամենն ի վերջո ուղղված է հասարակական կարգի ներդաշնակության ու անձի հոգեկան հարաբերական հակասարակշուրջյան պահպանմանը:

Անշոշտ, կարգը խախտողների վարքագիր հանդեպ լրությունն ու անտարբերությունը, հակադրեցության բացակայությունը կարող են հանգեցնել հավասարության և արդարության պահանջմունքի ծանր ֆրուստրացիաների:

Անհաջողությունները, ինչ խոսք, ազդում են նարդու կենսական դիրքորոշումների վրա՝ ողեկցվելով դրդապատճառների փոխանակումով: Հոգեկարգավորման վերջնական միտումները բախումների ու վեճների լրացնան ճանապարհով հասարակական ներդաշնակ կարգի վերականգնման, ինչպես նաև անձի հոգեկան և մտավոր աշխարհի հակասարակշուրջյան հասնելի է: Երբ լարվածությունը վերացնելու, փոխադարձ զիջումների, համագործակցությունը վերականգնելու երկուստեք ձգումներ, կոնֆլիկտը թևափոխում է գործնական հանգուցալուծման փուլ:

Կոնֆլիկտի լիակատար հանգուցալուծման կարելի է հասնել այն դեպքում, երբ և արտաքին, և՝ ներքին մակարդակներում կոնֆլիկտային իրավիճակի երկու բաղադրիչներն եւ ձևափոխսպում են:

## ЭНЕРГЕТИКА КОНФЛИКТА И ПСИХОКОРРЕКЦИЯ В ПРОЦЕССЕ ОБЩЕНИЯ

Резюме

K. Saakyan, R. Oganesyan

В конфликтных ситуациях различаются объективные и субъективные факторы возникновения конфликта. Существенную роль в динамике конфликта играет энергетика. Наша цель – это достижение разрешения конфликта мирным путем. Процесс психокоррекции способствует выявлению и разработке противоконфликтных средств, приводящих к обретению относительной уровновешенности личности.